



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, 0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19, հեռ.՝ (+374 11) 51 33 50, էլ. փոստ՝ artak.manukyan@parliament.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. օրենքի նախագիծը,
2. օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը,
3. գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքը:

Նախագծի հիմնական զեկուցող՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան:

Խնդրում ենք օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ՝

ԱՐՏԱԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ

ՄԽԶՅԱՆ

ԿԱՐԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱԶԱՍՊ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԵՂԻՇԵ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշվեքննիչ պալատի մասին» 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի.

1. 2-րդ մասի 3-րդ կետից «,եթե դրանցով նախատեսված է նման ստուգման հնարավորություն» բառերը հանել.
2. 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերից «,եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն» բառերը հանել.
3. 2-րդ մասում լրացնել նոր՝ 7-րդ կետ.

«իրավաբանական անձը իրավական ակտով և հավատարմագրային կառավարման պայմանագրով հանդիսանում է պետական և(կամ) համայնքային սեփականության (գույքի) հավատարմագրային կառավարիչ, միայն հավատարմագրային կառավարման հետ կապված՝ սույն կետով նախատեսված իրավական ակտի և պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար:».

4. 3-րդ մասի առաջին նախադասության «1-ին մասով, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով» թվերը և բառերը փոխարինել՝ «1-ին և 2-րդ մասերով» թվերով և բառերով, ինչպես նաև երկրորդ և երրորդ նախադասությունները հանել:

Հոդված 2. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում «,բացառությամբ օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվության» բառերը հանել:

Հոդված 3. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի.

1. 2-րդ նախադասության «դեպքում և» բառերը հանել.
2. լրացնել նոր՝ երրորդ նախադասություն.

«Անձնական տվյալներ պարունակող տեղեկատվությանը հաշվեքննողը կարող է ծանոթանալ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ.»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և անհրաժեշտությունը

Համաձայն ՀՀ Սահմանադրության 198-րդ հոդվածի 1-ին մասի, Հաշվեքննիչ պալատն անկախ պետական մարմին է, որը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 198-րդ հոդվածի 4-րդ մասի, Հաշվեքննիչ պալատի լիազորությունները, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք): Ներկա դրությամբ առկա են հաշվեքննության գործընթացը կարգավորող օրենսդրության վերաբերյալ մի շարք ուսումնասիրություններ, որոնք անցկացվել են միջազգային կազմակերպությունների կողմից: Արդյունքները վկայում են, որ Օրենքում կան որոշակի անհամապատասխանություններ INTOSAI ստանդարտների հետ, մասնավորապես՝ Հաշվեքննիչ պալատի անկախության սկզբունքների մասով:

Սույն Նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է Հաշվեքննիչ պալատի լիազորությունների հստակեցմամբ, վերջինիս կողմից իրականացվող հաշվեքննությանն ու ստուգմանը վերաբերող լիազորությունների ընդլայնմամբ, ինչպես նաև հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների ամրապնդմամբ: Մասնավորապես.

1) Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված դեպքերում իրավաբանական անձանց մոտ նախատեսվող ստուգումների գործընթացն ունի որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես, Օրենքով նախատեսված դեպքերում (օրինակ՝ մասնավոր ընկերությունը ստացել է բյուջետային վարկ, կամ դրամաշնորհ կամ պետական երաշխիք և այլն) ստուգում կարող է լինել, եթե պետության կամ համայնքի և մասնավոր ընկերության միջև կնքված պայմանագրով նախատեսված է նման ստուգման լիազորություն: Բացի այդ, այդուհանդերձ հնարավոր ստուգման դեպքում Հաշվեքննիչ պալատի ներկայացուցիչը ստուգման ընթացքում չի կարող ֆիզիկապես գտնվել ստուգվող ընկերության մոտ, այսինքն՝ ստուգումը պետք է կազմակերպի միմիայն Հաշվեքննիչ պալատի աշխատավայրում:

Այս առումով, հարկ է նշել, որ նախկինում տրված բյուջետային վարկերի, դրամաշնորհների կամ երաշխիքների և օրենքով նախատեսված մյուս դեպքերում որևէ պայմանագրում իրականում նախատեսված չէ ստուգման հնարավորություն: Փաստորեն, իրականում այս իրավունքը կրում է խիստ սահմանափակ բնույթ: Այն ձևական է և կարող է վերաբերել միայն հետագայում կնքվելիք պայմանագրերին (եթե այդ նոր պայմանագրերում նախատեսվեն նման լիազորություններ):

Իսկ ինչ վերաբերում է ստուգման օբյեկտում ֆիզիկապես հայտնվելու արգելքին, ապա ակնհայտ է, որ այս դեպքում Օրենքով նախատեսված ոչ բոլոր ընթացակարգերն են կիրառվելու հաշվեքննողի (ստուգողի) կողմից: Օրինակ՝ անհրաժեշտության դեպքում ստուգողը չի կարողանալու «գննել» (Օրենքով սահմանված հաշվեքննության ընթացակարգ) այն ակտիվը, որը ձեռք է բերվել բյուջետային վարկի միջոցներով կամ օրինակ՝ ստուգողը չի կարողանալու դիտարկում իրականացնել, այն է՝ ստուգման օբյեկտում ականատես լինել ստուգման օբյեկտի պատասխանատու անձանց կողմից ստուգման առարկային վերաբերող գործընթացի կամ ընթացակարգի կատարմանը:

Այսպիսով, ելնելով նշված սահմանափակումներից, արձանագրվում է նաև այն փաստը, որ Հաշվեքննիչ պալատը անհրաժեշտության դեպքում որևէ պետական մարմնում հաշվեքննություն իրականացնելիս Օրենքով սահմանված կարգով մասնավոր ընկերությունների մոտ լիարժեք և բավարար ստուգում չի կարող իրականացնել:

Հետևաբար, Նախագիծն անդրադառնում է Օրենքով սահմանված մասնավոր ընկերությունների մոտ ստուգումներ կազմակերպելու գործում եղած սահմանափակումները վերացնելուն:

2. Միաժամանակ, Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Հաշվեքննիչ պալատին առցանց հասանելի են հաշվեքննության օբյեկտներին (ստուգման օբյեկտներին) պատկանող հաշվեքննության առարկային (ստուգման առարկային) առնչվող էլեկտրոնային շտեմարանները, բացառությամբ օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվության: Հիմնականում այդ իրավակարգավորումը գործնականում չի իրացվում, որովհետև այդ էլեկտրոնային շտեմարաններն իրենց մեջ պարունակում են անձնական տվյալներ, իսկ օրենսդրությամբ Հաշվեքննիչ պալատին տրված չէ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ համապատասխան տեղեկատվության հասանելիություն: Մինչդեռ, այդ տեղեկատվությունը խիստ անհրաժեշտ է հաշվեքննության համար և դրա բացակայությունը բացասաբար է անդրադառնում հաշվեքննության նպատակների վրա:

Համեմատության համար պետք է նշել, որ Պետական վերահսկողական ծառայությանը (այսուհետ՝ ՊՎԾ) համաձայն «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի, անձնական տվյալները հասանելի են ՊՎԾ-ին:

Ի դեպ, հարկ է նշել, որ հաշվեքննության ընթացքում գործող իրավակարգավորումների համաձայն, պետական գաղտնիք համարվող տեղեկատվությունը հասանելի է հաշվեքննողների համար և գործնականում որևէ խոչընդոտ չի լինում:

Այսպիսով, արձանագրվում է, որ անձնական տվյալներ պարունակող տեղեկատվությունը հաշվեքննության ընթացքում հասանելի չէ հաշվեքննողներին: Հետևաբար, անհրաժեշտ է սույն Նախագիծով լրացում կատարել Օրենքում և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ անձնական տվյալների նկատմամբ հաշվեքննության նպատակով տալ լիարժեք հասանալիություն հաշվեքննողներին:

3. Միաժամանակ, հարկ է նշել, որ Օրենքի համաձայն Հաշվեքննիչ պալատը հավատարմագրային կառավարման հանձնած պետական և համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ չունի լիարժեք հաշվեքննություն իրականացնելու իրավասություն: Մինչդեռ, ըստ գործող Սահմանադրության 198-րդ հոդվածի 1-ին մասի, Հաշվեքննիչ պալատը լիազորված է հաշվեքննել պետական և համայնքային սեփականության օգտագործումը:

Նշված հաշվեքննության ոչ լիարժեք լիազորությունը պայմանավորված է Օրենքում առկա սահմանափակումներով: Մասնավորապես, թեև Օրենքով Հաշվեքննիչ պալատը կարող է հաշվեքննել որևէ պետական մարմնի ֆինանսատնտեսական գործունեությունը, սակայն սահմանափակված է համապատասխան մարմնի այնպիսի հսկողական գործառույթների հաշվեքննությամբ, ինչպիսիք են կոնցեսիայի դեպքում պետական և համայնքային սեփականության կառավարման հիմանդրի /պետություն կամ համայնք/ լիազոր մարմնի հսկողական կամ վերահսկողական գործառույթները:

Այս առումով, Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն իրականացնելիս լիազոր մարմնում հաշվեքննություն իրականացնելիս չի կարող ստուգել հավատարմագրային կառավարչի ֆինանսատնտեսական գործունեությունը՝ կապված հավատարմագրային կառավարման պայմանների և պահանջների հետ:

Այսպիսով, անհրաժեշտ է Օրենքում սահմանել պետական և համայնքային սեփականությունը հավատարմագրային կառավարման գործընթացի լիարժեք հաշվեքննության լիազորություն, ներառյալ հավատարմագրային կառավարչի ֆինանսատնտեսական գործունեության

ստուգման հնարավորությամբ, անկախ վերջինիս կազմակերպահրավական կարգավիճակից:

1. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը և միջազգային փորձը

Արտաքին պետական հաշվեքննության ոլորտում իրականացվող քաղաքականության սահմանման իմաստով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» 24-րդ հոդվածի համաձայն, այն կայանում է Հաշվեքննիչ պալատի՝ որպես Հայաստանի Հանրապետության՝ աուդիտ իրականացնող բարձրագույն հաստատության դերի հետագա ամրապնդումը՝ մասնավորապես դրա ֆինանսական, կազմակերպական և գործառնական անկախության տեսանկյունից՝ արտաքին աուդիտի (INTOSAI) միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխան:

Այս առումով, հարկ է նշել, որ Աուդիտի բարձրագույն մարմնի անկախության հիմնադրույթները սահմանված են INTOSAI կողմից հաստատված ISSAI-P 1 Լիմայի հռչակագրով և ISSAI-P 10 Մեխիկոյի հռչակագրով:

Բացի այդ, Օրենքի և նշված ստանդարտների համապատասխանության վերաբերյալ մի շարք միջազգային կազմակերպություններ ներկայացրել են իրենց գնահատականը, ըստ որի Օրենքում կան մի շարք դրույթներ, որոնք չեն բխում INTOSAI ստանդարտներից: Մասնավորապես.

1. Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական անձանց մոտ ստուգում իրականացնելիս հաշվեքննությունը /ստուգումը/ սահմանափակող դրույթների վերացման մասով /միայն Հաշվեքննիչ պալատի աշխատավայրում և միայն, եթե պայմանագրով նախատեսված է ստուգման հնարավորություն/.

Լիմայի հռչակագիր, բաժին 10, մաս 2 - Ցանկացած աուդիտի տեսակի համար Աուդիտի բարձրագույն մարմինը պետք է որոշի՝ արդյոք նպատակահարմար է աուդիտն իրականացնել աուդիտի ենթարկվող կառույցում, թե՛ Աուդիտի բարձրագույն մարմնում:

ԵՄ «ՍԻԳՄԱ» ծրագրի ՀՀ հանրային կառավարման սկզբունքների վերաբերյալ ելակետային զեկույց - Հաշվեքննիչ պալատը իրավասություն չունի հաշվեքննություն իրականացնելու պետական կամ համայնքային բյուջետային միջոցներից չֆինանսավորվող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և հիմնարկներում, ինչպես նաև հանրային գործառույթ իրականացնող՝ վարկեր, դրամաշնորհներ կամ սուբսիդիաներ ստացող իրավաբանական անձանց մոտ, այդ թվում՝ այցելելու դրանց տարածքներ (5-րդ հոդված, 1-2 մասեր):

2. Հաշվեքննության առարկային վերաբերող անձնական տվյալներ պարունակող տեղեկատվության հասանելիությունն ապահովելու մասով.

Լիմայի հռչակագիր, բաժին 10, կետ 1. - Աուդիտի բարձրագույն մարմիններին պետք է հասանելի լինեն ֆինանսական կառավարման հետ կապված բոլոր գրանցումները և փաստաթղթերը, և պետք է Աուդիտի բարձրագույն մարմինները լիազորված լինեն բանավոր կամ գրավոր կերպով պահանջել նրանց կողմից անհրաժեշտ համարվող ցանկացած տեղեկատվություն:

Լիմայի հռչակագիր բաժին 10 կետ 3. - Օրենքը կամ Աուդիտի բարձրագույն մարմինը (առանձին դեպքերում) պետք է սահմանի Աուդիտի բարձրագույն մարմնին տեղեկատվության տրամադրման կամ փաստաթղթերի և հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետներ:

Մեխիկոյի հռչակագրի 4-րդ սկզբունք. - Օրենսդրությամբ սահմանված պարտականությունների պատշաճ կատարման համար, Աուդիտի բարձրագույն մարմինները պետք է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերին և տեղեկատվությանը ժամանակին, անխափան, ուղիղ և անվճար հասանելիության բավարար լիազորություններ ունենան:

ԵՄ «ՍԻԳՄԱ» ծրագրի ՀՀ հանրային կառավարման սկզբունքների վերաբերյալ ելակետային զեկույց - Հաշվեքննիչ պալատին բանկային կամ օրենքով սահմանված այլ տեսակի գաղտնիք

(անձնական տվյալներ) պարունակող էլեկտրոնային շտեմարանների առցանց հասանելիության իրավասությունը օրենքով հստակ սահմանված չէ (32-րդ հոդված, 1-ին մաս):

ԱՄՆ աուդիտի բարձրագույն մարմնի գերազանցության կենտրոնի «Հաշվեքննիչ պալատի անկախության, կարողությունների և որակի ապահովման ամրապնդման համար անհրաժեշտ գործողություններ» գնահատման զեկույց - Փոփոխություններ կատարել ՀՊ մասին և մյուս օրենքներում, որպեսզի Հաշվեքննիչ պալատի համար սահմանվի հաշվեքննության գործարքների և ծրագրերի համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիություն:

3. Պետական և համայնքային սեփականությունը հավատարմագրային կառավարման հանձնելու գործընթացի լիարժեք հաշվեքննության շրջանակներում կառավարչի ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգելու լիազորություն սահմանելու մասով:

ԵՄ «ՍԻԳՄԱ» ծրագրի ՀՀ հանրային կառավարման սկզբունքների վերաբերյալ ելակետային զեկույց - «Հաշվեքննիչ պալատը պետք է մանդատ ունենա իրավաբանական անձանց ստուգելու, որպեսզի տեսնի, թե ինչպես են պայմանագրով ներգրավված ընկերություններն օգտագործել հանրային ռեսուրսները և արդյոք ակնկալվող արդյունքներին հասել են: Աուդիտի առարկա կարող է լինել նաև ոչ ֆինանսական կամ ոչ տնտեսական գործունեությունը: Օրենքը սահմանափակում է կոնցեսիաների կամ հանրային-մասնավոր համագործակցությունների նկատմամբ աուդիտ անելու Հաշվեքննիչ պալատի մանդատը»:

Այսպիսով, Նախագծով ներկայացված փոփոխություններն ու լրացումները բխում են INTOSAI ստանդարտների պահանջներից, և բացի այդ Նախագծով լրացուցիչ հնարավորություններ են ստեղծվում հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում ընդլայնել Հաշվեքննիչ պալատի լիազորությունները և վերացնել եղած սահմանափակումները, ինչն անշուշտ դրական կարող է անդրադառնալ հանրային ռեսուրսների կառավարման գործում թափանցիկության, հաշվետվողականության և հրապարակայնության բարձրացման վրա:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ենթադրում է հետևյալ քաղաքական նպատակները.

- մակրոտնտեսական կայուն միջավայրին համապատասխանող բյուջետային ռեսուրսների (մուտքերի) համապարփակ և իրատեսական գնահատում,

- քաղաքականությունների իրականացման նպատակով կատարվող ծախսերի՝ վարից վեր մոտեցմամբ գնահատում,

- հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի ներդաշնակության ապահովում համապատասխան մեխանիզմների օգնությամբ:

Ելնելով վերոգրյալից, պարզ է դառնում, որ հաշվեքննության ընթացքում հաշվեքննության առարկային վերաբերող անձնական տվյալները հաշվեքննողների համար լիարժեք հասանելիությունն ապահովելը, հավատարմագրային կառավարման գործընթացի լիարժեք հաշվեքննության իրականացումը, հաշվեքննության գործիքակազմի որոշակի անհարկի սահմանափակումների վերացումը բխում են երկրի պետական քաղաքականության շահերից:

II. Առաջարկվող լուծումները

Նախագծի ընդունմամբ առաջարկվում է հաշվեքննության գործընթացը կարգավորող օրենսդրության բարելավում՝ նկատի ունենալով INTOSAI ստանդարտներով Հաշվեքննիչ պալատի անկախության համար սահմանված չափորոշիչները: Այն, անշուշտ, կբարձրացնի հաշվեքննության գործընթացի արդյունավետությունը, ինչն իր հերթին կբարձրացնի հանրային ռեսուրսների կառավարման և օգտագործման թափանցիկությունը, հրապարակայնությունն ու հաշվետվողականությունը:

Մասնավորապես, առաջարկվում է հետևյալ լուծումները.

- Պետական և համայնքային սեփականությունը հավատարմագրային կառավարման գործընթացը դարձնել հաշվեքննելի:

- Հաշվեքննության գործընթացում տալ հաշվեքննողներին հաշվեքննության առարկային վերաբերյալ անձնական տվյալների հասանելիություն:

- Հանել հաշվեքննության ընթացքում առանձին իրավաբանական անձանց մոտ ստուգումներ անելու գործընթացում առկա սահմանափակումները (ստուգումն իրականացնել միայն Հաշվեքննիչ պալատի աշխատավայրում, ստուգումն իրականանցել, եթե պայմանագրում նախատեսված է նման հնարավորություն):

III. Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծի կարգավորման առարկան արտաքին պետական հաշվեքննության գործընթացի բարելավումն է, որի արդյունքում կբարձրանա հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակը:

IV. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի պատգամավոր Արտակ Մանուկյանի կողմից:

V. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ապահովել Արտաքին պետական հաշվեքննության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը բարելավում՝ այն համապատասխանեցնելով INTOSAI ստանդարտներին:

ՏԵՂԵԿԱՆՔ

Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ

Հոդված 5. Հաշվեքննիչ պալատի լիազորությունները

2. Հաշվեքննիչ պալատն ստուգում չի իրականացնում այն իրավաբանական անձանց մոտ, որոնց վերապահված են պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթներ, և դրանց իրականացումը չի ֆինանսավորվում պետական կամ համայնքային բյուջեներից: Հաշվեքննիչ պալատը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հաշվեքննության շրջանակում ստուգում է իրականացնում իրավաբանական անձի մոտ, եթե՝

1) ոչ առևտրային իրավաբանական անձը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից.

2) առևտրային իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի 50-ից ավելի տոկոսը պետական կամ համայնքային մասնակցությամբ է.

3) իրավաբանական անձին իրավական ակտով և պայմանագրով վերապահվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթների իրականացում՝ պետական կամ համայնքային բյուջեների միջոցների հաշվին՝ միայն սույն կետով նախատեսված իրավական ակտի և պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար, ~~եթե դրանցով նախատեսված է նման ստուգման հնարավորություն.~~

4) իրավաբանական անձը պայմանագրով ստացել է պետական բյուջեից վարկեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական երաշխիքով ապահովված վարկեր կամ այլ ֆինանսական միջոցներ, միայն այդ միջոցների օգտագործման հետ կապված՝ սույն կետով նախատեսված պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար, ~~եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն.~~

5) իրավաբանական անձը պայմանագրով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների կողմից ստացել է դրամաշնորհներ կամ սուբսիդիաներ, միայն այդ միջոցների օգտագործման հետ կապված՝ սույն կետով նախատեսված պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար, ~~եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն:~~

7) իրավաբանական անձը իրավական ակտով և հավատարմագրային կառավարման պայմանագրով հանդիսանում է պետական և(կամ) համայնքային սեփականության (գույքի) հավատարմագրային կառավարիչ, միայն հավատարմագրային կառավարման հետ կապված՝ սույն կետով նախատեսված իրավական ակտի և պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դեպքերում հաշվեքննիչ պալատն իրավասու է համապատասխանաբար

հաշվեքննություն, ստուգում (այսուհետ՝ նաև հաշվեքննություն) իրականացնելու ինչպես հաշվեքննության օբյեկտում, այնպես էլ հաշվեքննիչ պալատի աշխատավայրում: Սույն հոդվածի 2-րդ մասի 3-5-րդ կետերով սահմանված դեպքերում հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունն իրականացնում է իր աշխատավայրում՝ համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Սույն հոդվածի 2-րդ մասի 3-5-րդ կետերով նախատեսված իրավաբանական անձանցից հաշվեքննիչ պալատն իրավասու է փաստաթղթեր կամ տեղեկատվություն պահանջելու միայն այն դեպքում, երբ դրանք հասանելի չեն դառնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:

Հոդված 32. Հաշվեքննության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը

1. Հաշվեքննիչ պալատին առցանց հասանելի են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հաշվեքննության օբյեկտներին պատկանող պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցներին, ստացված փոխառություններին ու վարկերին, պետական և համայնքային սեփականության օգտագործմանն առնչվող էլեկտրոնային շտեմարանները, բացառությամբ օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվության:

Հոդված 36. Հաշվեքննողի լիազորությունները

1. Հաշվեքննողն իրավասու է տվյալ ծրագրային կետի շրջանակներում՝

1) իրականացնելու հաշվեքննություն.

2) հաշվեքննության օբյեկտի ղեկավարից կամ նրան փոխարինող անձից պահանջելու հաշվեքննության առարկային առնչվող առկա էլեկտրոնային շտեմարանների հասանելիություն, փաստաթղթեր, անհրաժեշտ տեղեկանքներ, տեղեկատվություն, հաշվապահական հաշվետվություններ, դրանցից դուրս գրելու տեղեկություններ և ստանալու պարզաբանումներ: Օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվությանը հաշվեքննողը կարող է ծանոթանալ տվյալ գաղտնիքի համար օրենքով սահմանված դեպքում և կարգով: Անձնական տվյալներ պարունակող տեղեկատվությանը հաշվեքննողը կարող է ծանոթանալ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ.